ՀՀ ԳԱԱ Գիտության Զարգացման Հիմնադրամ
Science Development Foundation of NAS RA
Фонд Развития Науки НАН РА

0019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24, Հայաստանի Հանրապետություն
Հեռ.+(37410) 527530, ֆաքս +(37410) 569281, E-mail: SD_Fund@sci.am, http://sdfund.sci.am

№----------

ՀՀ ԳԱԱ կազմակերպությունների
տնօրեններին

Հարգելի տնօրեն

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ԳԱԱ համակարգի աշխատողների համար բնակելի շենք կառուցելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ»-ին հատկացվել է 3015 քմ. տարածք Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պ. Սևակի փողոցի 1/7 հասցեում (ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տարածքում):

Ներկայումս շենքի շինարարությունը արդեն սկսվել է, ուստի խնդրում ենք Ձեզ մինչև ս.թ. օգոստոսի 8-ը ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամ» ներկայացնել Ձեր կազմակերպության այն աշխատողների ցանկը՝ ըստ առաջնահերթության (կցելով լրացված հավելվածը), ովքեր ցանկություն ունեն նշված շենքից բնակարան գնել:

Կից ներկայացնում ենք տեղեկատվություն շենքի բնակարանների բաշխման, շահառուների ընտրության կարգի, իրավունքների և պարտականությունների մասին:

Բոլոր փաստաթղթերը և անհրաժեշտ տեղեկատվությունը կարող եք տեսնել ՀՀ ԳԱԱ «Գիտության զարգացման հիմնադրամի» կայքէջի «Նորություններ» բաժնում (http://sdfund.sci.am):

ՀՀ ԳԱԱ ԳԶՀ ՏՆՕՐԵՆ՝ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Կատ. Ա. Մարգարյան
Հեռ. 58-36-91